

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴ

27 հունվարի 2009 թ.

թիվ 20-Ն

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄՆԻՆ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ, ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ և 11-րդ հոդվածները, «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 66 հոդվածը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ, 20-րդ, ինչպես նաև «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը **որոշում է.**

(նախաբանը փոփ. 02.12.14 թիվ 335-Ն)

1. Հաստատել «Իրավաբանական անձանց կողմից իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին ներկայացվող իրական շահառուների վերաբերյալ հայտարարության օրինակելի ձևը»՝ համաձայն Հավելված 1-ի (կցվում է):
2. Հաստատել «Իրավաբանական անձանց կողմից իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին իրական շահառուների վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու կարգը և ժամկետները»՝ համաձայն Հավելված 2-ի (կցվում է):
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

**ՀՀ կենտրոնական
բանկի նախագահ**

Ա. Զավադյան

2009 թ. փետրվարի 4
ք. Երևան

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ N

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ԳՐԱՆՑՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ

1. Ես՝ _____ ս, հանդիսանալով _____
(անուն, հայրանուն, ազգանուն) (անվանումը)

իրավաբանական անձի _____ հայտարարում եմ, որ նշված իրավաբանական

(կարգավիճակը)
անձի իրական շահառու է հանդիսանում՝ _____ :
(անուն, հայրանուն, ազգանուն)

ա) _____ գ) _____
ծննդյան ամսաթիվ (օր, ամիս, տարի) քաղաքացիություն

(լրացնել առկայության դեպքում) (լրացնել առկայության դեպքում)
բ) _____ դ) _____
բնակության վայր (երկիր, քաղաք, փողոց, շենք, անձնագրի սերիան/համարը, տրամադրման
տուն/բնակարան) ամսաթիվ
(լրացնել առկայության դեպքում) (տես սույն հայտարարության ներկայացման կարգի
և
ժամկետների 7-րդ կետը)

2. Սույն հայտարարության 1-ին կետում նշված անձը իրավաբանական անձի իրական շահառու է հանդիսանում հետևյալ հիմք(եր)ից որևէ մեկով՝

- իրականում գործում է իրավաբանական անձի անունից կամ նրա օգտին, կամ
- փաստացի (իրական) հսկողություն է իրականացնում իրավաբանական անձի կամ գործարքի կամ գործարար հարաբերության նկատմամբ, և (կամ) որի անունից կամ օգտին իրականացվում է գործարքը կամ գործարար հարաբերությունը, կամ
- քվեարկելու իրավունքով տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայտերի) 20 և ավելի տոկոսին (բացառությամբ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով հաշվետու թողարկողների) կամ իր մասնակցության ուժով կամ իրավաբանական անձի հետ կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի կանխորոշելու դրա որոշումները, կամ
- հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի կառավարման և (կամ) ղեկավար մարմնի անդամ, կամ
- գործում է տվյալ իրավաբանական անձի հետ համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից:

Տեղեկացված եմ, որ իրավաբանական անձի իրական շահառուի վերաբերյալ տվյալներ չներկայացնելը, սխալ (այդ թվում՝ կեղծ կամ ոչ արժանահավատ) կամ թերի տվյալներ ներկայացնելը առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ԳՐԱՆՑՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄՆԻՆ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

1. Սույն կարգով սահմանվում են իրավաբանական անձանց կողմից իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին իրական շահառուի վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու կարգը և ժամկետները:
2. Հավելված 1-ով սահմանված «Իրավաբանական անձանց կողմից իրավաբանական անձանց գրանցող մարմնին իրական շահառուների վերաբերյալ հայտարարության օրինակելի ձևը» (այսուհետ՝ հայտարարություն) իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին իրավաբանական անձի կողմից ներկայացվում է իրավաբանական անձանց պետական գրանցման, կանոնադրական կապիտալը (բաժնեհավաք կապիտալը և այլն) կամ հիմնադիրների, մասնակիցների, անդամների, փայատերերի, բաժնետերերի կազմը փոփոխելու դեպքում:
3. Սույն կարգի 2-րդ կետով սահմանված դեպքերում հայտարարությունը ներկայացվում է «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ, 39-րդ և 40-րդ հոդվածներով սահմանված կարգով՝ նշված հոդվածներով նախատեսված դիմումը տրամադրելուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում թղթային եղանակով:
4. «Փողերի վրացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ հայտարարության մեջ իբրև իրական շահառու կարող է լրացվել այն ֆիզիկական անձը, որը.
 - 1) իրականում գործում է իրավաբանական անձի անունից կամ նրա օգտին, կամ
 - 2) փաստացի (իրական) հսկողություն է իրականացնում իրավաբանական անձի կամ գործարքի կամ գործարար հարաբերության նկատմամբ, և (կամ) որի անունից կամ օգտին իրականացվում է գործարքը կամ գործարար հարաբերությունը, կամ
 - 3) քվեարկելու իրավունքով տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) քսան և ավելի տոկոսին (բացառությամբ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով հաշվետու թողարկողների) կամ իր մասնակցության ուժով կամ իրավաբանական անձի հետ կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի կանխորոշելու դրա որոշումները, կամ
 - 4) հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի կառավարման և (կամ) ղեկավար մարմնի անդամ, կամ

5) գործում է տվյալ իրավաբանական անձի հետ համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից:

5. Հայտարարության 1-ին կետում իրավաբանական անձը ներկայացնելու իրավասություն ունեցող անձի կողմից լրացվում է իրավաբանական անձի իրական շահառուի անուն, ազգանունը:

6. Հայտարարության 1-ին կետի «ա»-ից «դ» ենթակետերում իրավաբանական անձը ներկայացնելու իրավասություն ունեցող անձի կողմից լրացվում են իրավաբանական անձի իրական շահառուի ծննդյան ամսաթիվը, բնակության վայրը և քաղաքացիությունը, անձնագրային տվյալները՝ համապատասխան տեղեկատվության առկայության դեպքում:

7. Հայտարարության 1-ին կետի «դ» ենթակետի առնչությամբ տեղեկատվության բացակայության դեպքում՝ իրավաբանական անձը ներկայացնելու իրավասություն ունեցող անձն այդ կետում լրացնում է իր անձնագրային տվյալները՝ փակագծում նշելով իր անուն, ազգանունը:

8. Հայտարարության 2-րդ կետում իրավաբանական անձը ներկայացնելու իրավասություն ունեցող անձի կողմից լրացվում է սույն կարգի 4-րդ կետի համաձայն իրավաբանական անձի իրական շահառու հանդիսանալու հիմքը:

9. Մինչույն իրավաբանական անձին վերաբերող յուրաքանչյուր հայտարարության վրա իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնի կողմից դրվում է հերթական համար:

10. Երկու կամ ավելի իրական շահառուների առկայության դեպքում հայտարարության մեջ լրացվում են համապատասխան թվով իրական շահառուների տվյալները՝ յուրաքանչյուրի համար օգտագործելով նույն հայտարարության ձևը՝ հերթական համարով:

11. Հայտարարության դարձերեսին պետք է նշված լինեն սույն հավելվածով սահմանված՝ հայտարարություն ներկայացնելու կարգը և ժամկետները:

(հավելվածը փոփ. 02.12.14 թիվ 335-Ն, խմբ. 13.09.16 թիվ 144-Ն)